

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ

Երկար դարեր շարունակ պետականությունից զրկված և անպատմելի արհավիրքների ենթարկված հայ ժողովրդի համար Էջմիածնի Մայր Աթոռը հաճախ է, որ դարձել է ինչպես քաղաքական, այնպես էլ մշակութային կյանքի, հույսի և լույսի փարոս: Այնպիսի հայրապետներ ինչպիսիք են եղել Ստեփաննոս Սալմաստեցին ու Միքայել Սեբաստացին, Հակոբ Զողայեցին ու Սիմեոն Երևանցին, Հովսեփ Արղությանն ու Ներսես Աշտարակեցին և ուրիշներ իրենց լույսն են մուծել հայ ժողովրդի ազատագրության և լուսավորության վսեմ գործին: Անկախ ձեռք բերված արդյունքներից, նրանք դարձել են մեր ժողովրդի դարավոր իղձերի և մտորումների արտահայտիչներն ու կրողները:

Փաստ է, որ հայ ազատագրական շարժման և ազգային ինքնագիտակցության զարթոնքին նպաստող կարևորագույն ազդակներ են դարձել նաև հայ միջնադարյան պատմագրության ներկայացուցիչների երկերը: Եվ իսկապես ինչպես հայրենի բնաշխարհի ծերպերում ծվարած, այնպես էլ աշխարհով մեկ սփռված ու աստանդական կյանք վարող և ձուլման եզրին կանգնած հայրդիների համար ի՞նչ բան կարող էր կյանքի կոչել նրանց ազգային զգացումները և կապել նրանց իր ազատագրությանը տենչացող մայր հողին, եթե ոչ հայ պատմության նշխարների լույս ընծայումն ու տարածումը: Հայ պատմագիրի երկը, իր օրհասին մոտեցող աստանդական հային՝ պատմելու էր նրա երբեմնի հայրենիքի փառավոր անցյալի մասին և նոր հույս էր ներշնչելու նրան գոյատևելու՝ հանուն նոր գալիք լավագույն օրերի:

Նույնիսկ այն շրջանում, երբ Էջմիածինը հնարավորություն չէր ունեցել ստեղծելու իր սեփական տպարանը և իր նվիրյալ միաբանների միջոցով հայրենիքից շատ հեռու՝ արտասահմանում անպատմելի դժվարությունների գնով սկսել էր տպագրել կրոնական և ծիսական բնույթի անհրաժեշտ եղող գրքեր, նա առիթը ձեռքից բաց չէր թողնում ընթերցող հայ հասարակության սեփականությունը դարձնելու նաև հայ պատմագիրների երկերը: Այդպես է, որ հետավոր Աստերդամում Էջմիածնի միաբան Ոսկան վ. Երևանցին բաց անելով «Ս. Էջմիածնի և Ս. Մարգարիտ» անվան տպարանը 1669 թ. լույս էր ընծայում, առաջին անգամ լիներով, Առաքել Դավրիժեցու պատմությունը հեղինակի իսկ կենդանության օրոք, իսկ 1695 թ. նույն վայրում Վանանդեցիների ջանքերով, դարձյալ առաջին անգամ, լույս աշխարհ է գալիս հայ ժողովրդի պատմահայր Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ը: Ավելի ուշ ևս իբրև շարունակություն սկսված նույն առաքելության՝ 1707 թ. զարնանը Էջմիածնից Ալեքսանդր Ա. Զողայեցի կաթողիկոսի կողմից Կ. Պոլիս է ուղարկվում նվիրակ Աստվածատուր վ. Աղավնին, բերելով իր հետ Ագաթանգեղոսի ձեռագիր մի օրինակը, որը և 1710 թ. դարձյալ առաջին անգամ լույս է ընծայում շքեղ կերպով Գր. Մարգվանցին: Հովսեփ արք. Արղությանի հովանավորությանը և անմիջական օժանդակությամբ Պետերբուրգում գործող Գր. Խալդարյանի տպարանից 1787 թ. լույս է տեսնում Եղիշեի պատմությունը, իսկ 1788 թ. Խալդարյանի մահից հետո ավարտվում է Ն. Ծնորհալու «Գիրք որ կոչի ընդհանրական»-ի առաջին հրատարակությունը:

Սիմեոն Երևանցի բազմաշնորհ կաթողիկոսը, երբ Էջմիածնում ի վերջո կարողանում է ստեղծել Հայաստանի առաջին տպարանն ու թղթի գործարանը, նախ և առաջ կարգի է բերել տպիս մատենադարանն ու դիվանատունը: Վերջիններիս բարեկարգումը չպետք է բացառել միայն պատմական աղբյուրներով և հայ ու օտար փաստաթղթերով այնքան հարուստ իր նշանավոր «Ջամբո»-ը գրելու հանգամանքով, այլ և պատմագիրներ հրատարակելու պահանջով: Սակայն ծիսական գրքերի մեծ պահանջը, Մատենադարանում եղող պատմական բնույթի գործերի և բնագրեր հրատարակելու փորձ ունեցող մարդկանց պակասը հնարավորություն չեն ընձեռում նրան նաև հայ պատմագիրների գործեր տպելու: Սիմեոն Երևանցու հաջորդ Դուկաս կաթողիկոսի օրոք ևս հնարավորություններ չեն ստեղծվում այս ուղղությանը և հաջողվում է միայն հրատարակության հանձնել 1787 թ. Հովսեփոս Երրայեցի պատմիչի հայերեն թարգմանությունը, կատարված լատիներենից՝ Ստեփաննոս Լեհացու կողմից և որը Էջմիածնի տպարանում կատարված հրատարակություններից ամենաընտիրներից մեկն էր: Մատթեոս Ա-ի օրոք 1865 թ. լույս է տեսնում Ն. Ծնորհալու «Թուղթ ընդհանրական»-ը, որը պատմական մեծարժեք փաստաթղթերի ժողովածու է: Թեև այն լույս էր տեսել մի քանի անգամներ, սակայն այս հրատարակության հիմքում դրվում էր այնպիսի մի գրչագիր, որի նախագաղափարներից մեկը եղել էր հեղինակի ինքնաձեռագիրը:

Հայ պատմագիրների հրատարակման համար միանգամայն նպաստավոր պայմաններ է ստեղծում Գեորգ Դ մեծագործ կաթողիկոսը: Նա մի կողմից արժեքավոր բազմաթիվ գրչագրերով հարստացնում է Մատենադարանը և հիմնովին կարգի բերել տպիս այն, իսկ մյուս կողմից՝ վերակառուցում է տպարանը և հիմնադրում Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ» ամսագիրը, որը բացառիկ էջ է բաց անում հայագիտության զարգացման համար, իսկ այս բոլորի համար՝ նոր ուժեր պատրաստելու մտահոգությամբ, հիմնադրում է ճեմարանը՝ Ինչպես միշտ նկատել է բանասեր Գ. Լևոնյանը «Էջմիածնի տպարանը անհախընթաց բարձրության է հասնում Գեորգ Դ կաթողիկոսի գահակալության տարիներում (1866—1882), իսկ 1870-ական թվականները Էջմիածնի տպարանի ամենատեսադուր շրջաններից մեկն են հանդիսանում»¹: 1870 թվականին իրար հետևից առաջին անգամ լինելով լույս

են տեսնում Զաքարիա սարկավագ Քանաքեղոս պատմագրությունը, Մինաս վ. Համդեցու «Ազգաբանություն Հայոց»-ը, Արրահամ կաթողիկոս Կրետացու պատմագրությունը, Սիմեոն Ապարանցու «Լիպասանու-



Հայ պատմագիրների հրատարակություններ
Մայր Աթոռի տպարանից

թիւն»-ը: 1871 թ. ևս շարունակելով նույն խանդավառությամբ սկսված գործը, Էջմիածնի տպարանը դարձյալ առաջին անգամ լինելով հրատարակում է 10-րդ դարի պատմիչ Ուխտանես եպիսկոպոսի պատմությունը, Դավիթ քեկի պատմությունը (Արգար Ստեփանյան Գույամիրյանի հրատարակությամբ), իսկ 1873 թ. լույս է տեսնում դարձյալ առաջին անգամ Սիմեոն կաթողիկոս Երևանցու «Ջամբո»-ը, որից հետո, մինչ այդ անտիպ մնացած պատմագիրների երկերով հայագիտությունը հարստացնելու գործը, հանկարծակիորեն ընդհատվում է: Հայտնի պատմաբան և լեզվաբան Ստեփաննոս Պալանյանյանը առանձին ընդարձակ գրախոսությամբ անդրադառնալով վերոհիշյալ հրատարակություններին, նշում էր, որ «վերջին տարիներում Էջմիածինը երկար

¹ Գաբրիել Լեոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946, էջ 219—220:

լուծությունից հետո յուր վրա դարձրեց հայ բանասերների ուշադրությունը մի քանի օգտակար հրատարակություններով, որոնց ընթացքը, որքան մեզ հայտնի է միայն ս. Աթոռի Մատենադարանի մեջ են գտնվում²։ Մի առ մի արժեքավորելով հրատարակված պատմագիրների մեծ մասի նշանակությունը, Պալասանյանը անշուշտ նկատի ունենալով վերոհիշյալ պատմագիրների շարքի երկար ընդհատումը (քանի որ ինք 1878 թ. էր գրում այդ գրքերի մասին), այն կարծիքն էր հայտնում, որ Էջմիածնի Մատենադարանում ամենայն հավանականությամբ հրատարակելի պատմագրեր չեն մնացել և առաջարկում էր լույս ընծայել պարսկական շահերի և օսմանյան սուլթանների կողմից Էջմիածնին տրված հրովարտակներն ու կաթողիկոսների թղթակցությունները³։ Իրականում, սակայն ի՞նչ իմամար բազմավաստակ գիտնականը, որ պատմագիրների հրատարակման ընդհատումը կապված էր բոլորովին այլ պատճառների հետ։ Ինչպես երևում է «Էջմիածին» հանդեսի այս տարվա համարներում լույս տեսած Արտակ եպիսկ. Սմբատյանի «Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը» ուսումնասիրության մեջ քերված Գեորգ Դ-ի ժամանակաշրջանին վերաբերող գրագրություններից, ցարական գրաքննությունը Կովկասի կառավարչության միջոցով «հակապետական» արարքների մեջ էր մեղադրում Էջմիածնի տպարանին և առաջադրում էր խիստ հսկողություն սահմանել նրա կողմից կատարված հրատարակությունների վրա։ Գեորգ Դ-ը մի առ մի նշելով Ամենայն Հայոց կաթողիկոսների կողմից Էջմիածնի տպարանի վերաբերյալ ունեցած իրավասության մասին, 1875 թ. հուլիսի 22-ին Կովկասի փոխարքային էր ուղարկում Էջմիածնի տպարանի կառավարչության նախագիծը և խնդրում միջնորդել կայսրի առաջ, այն հաստատել տալու համար։ Նրա երրորդ կետում դարձյալ նախատեսվում էր առանց գրաքննության տպագրել տալ «Ձեռագիրս նախնի մատենագրաց Հայոց և մանաւնդ ի՛ մատենադարանէ ս. Էջմիածնի ամենատեսակ-բովանդակութեամբ՝ կրօնական, փիլիսոփայական, պատմական, աշխարհագրական, թուարանական, բժշկական, հնախուզական և այլն»⁴։ Սակայն կաթողիկոսի բազմաթիվ դիմումները և հիշյալ նախագիծը որևէ դրական պոդդյունքի չեն հաս-

նում։ Անգամ դեռ 1876 թ. փետրվարի 28-ին Կովկասի կառավարչապետ իշխան Մուխրանսկին շարունակելով գրադարձել Էջմիածնի տպարանի գործունեությունը, մերժում էր լրկին կաթողիկոսի դիմումները և գրում. «Չիցեն անձամբ ինձ դէպք տպագրութեան ի տպարանի ս. Էջմիածնի շարադրութեանց, որք անհամապատասխան են ուղղութեամբ գրաքննական կանոնաց, որոյ վասն դարձուցեալ է ի վերայ իւր գուշադրութեան Կովկասեան գլխաւոր իշխանութեան... և թէ վասն այլը իսկ, զի կարեն միւս անգամ նորոգի ի տպարանի ս. Էջմիածնի նշմարեալքն արդէն ի մնա կանոնազանցութիւնք, ուստի չէ կարելի այլևս թողուլ զայն առանց կարևորն հսկողութեան ի կողմանէ պատշաճաւոր իշխանութեանց, յորոց վերայ ելեալ այն ըստ օրհին»⁵։ Գեորգ Դ-ը նոր դիմումներ է անում Կովկասի նոր կառավարչապետ Պավել Նիկոլաևիչին մինչև 1876 թ. վերջը և ապացուցում, որ Էջմիածնի տպարանի կողմից ոչ մի օրինազանցություն չի կատարվել։ Տպարանի հետագա վիճակի մասին փաստերը բացակայում են, Արտակ եպիսկ. Սմբատյանը իր վերոհիշյալ աշխատության մեջ նշում է, որ «Տպարանը այնուհետև շարունակում է մնալ ու գործել Ամենայն Հայոց կաթողիկոսների անմիջական հսկողության տակ»⁶։ Սակայն իրականում փաստը մնում է փաստ, որ սկսած 1878 թ. վականից «Ջամբո»-ի հրատարակումից մինչև 1884 թ., երբ լույս է տեսնում Առաքել Դավրիժեցու պատմության երկրորդ հրատարակությունը, ուղիղ 11 տարի Էջմիածնի տպարանից ոչ մի պատմագիր հնարավոր չի լինում հրատարակել։ Իրականում ոչ թե լույս չեկած թարգմանական և կամ վանեցիկների ու մշեցիների երգարանն էր Էջմիածնի տպարանը օրինազանցության մեջ մեղադրվելու պատճառը, որի մասին խոսք է լինում Գեորգ Դ-ի գրության մեջ, այլ 1871 թ. նույն տպարանից լույս ընծարված Ուխտանէսի պատմությունն էր։ Վերջին տարիներին Մոսկվայի պետական պատմ. արխիվում հայտնաբերված մի փաստաթղթի շնորհիվ հայտնի դարձավ, որ դեռևս 10-րդ դարում ապրած այդ պատմագրի գործն էր խնդրո առարկա դարձել։ 1875 թ. օգոստոսի 26-ին 127 համարը կրող իր խիստ գաղտնի գրությունը, Երևանի նահանգական ոստիկանական վճռչության ակտ մայրո Ջոլոտով-սկին, նորին կայսերական մեծության անձնական դիվանատան 3-րդ բաժանմունքին հայտնում էր Ալեքսանդրապոլում, գործող Արսեն Կրիտյանի ազատագրական գաղտնի

² Գրիգ. (Իմմ. Սո. Պալասանյան), Էջմիածնի գրատան (հրատարակությունները, «Փորձ», Թիֆլիս, 1878, ... թ. 4, էջ 368—408։

³ Նույն տեղում, էջ 408—409։

⁴ «Էջմիածին», 1972, հոկտեմբեր, էջ 62։

⁵ Նույն տեղում, էջ 69։

⁶ «Էջմիածին», 1972, նոյեմբեր, էջ 42։

խմբակի մասին և նշում որ իր գտած գրքերի թվում «Գտնված է Էջմիածնի վանքի տպարանում տպագրված «Ուխտանեսն եպիսկոպոսի գրությունները» անունով գիրքը: Այդ գիրքն իմ կողմից կնքվելով՝ ուղարկված է 1875 թ. փետրվարի 28-ի № 38 գրությամբ նորին կայսերական մեծության անձնական դիվանատան 3-րդ բաժանմունքին, որովհետև այդ գրքի մեջ գտել եմ արտահայտություններ հունա-ռուսական եկեղեցու դեմ»: Խիստ գաղտնի կոչված այս գրության շարունակության մեջ, կասկած հայտնելով Վ. Վ. Բաստամյանցի Գայանեի վանքում բաց արած տպարանի, ինչպես նաև Երևանում գործող տպարանի մասին, շարունակում է. «Այդ տպարանների վրա անհրաժեշտ է խիստ հսկողություն ունենալ տեղական ուստիկանության կողմից, մանավանդ Էջմիածնի վանքի պատերում գտնվող տպարանների նկատմամբ և այդ հսկողությունը անպայմանորեն չի կարելի վստահել Էջմիածնի գավառապետ Խանադովին: Այս մարդը վերին աստիճանի երկդիմի է և չափազանց նվիրված է հայերին ու Էջմիածնի վանքին: Իմ կարծիքը տպարանների հսկողության մասին անձամբ հայտնել եմ մահանգապետին»: Նույն մայրը Զոյողովսկին գրելով նաև Գուլամիրյանցի կողմից տպագրել ցանկացվող Արծրունյաց Սենեքերիմ թագավորի կյանքին նվիրված մի թատերախաղի մասին, մատնանշում էր, որ բաժանորդագրության թղթում հայոց այդ թագավորի անունը մեծատառով է գրված⁷: Ահա տիրող այսպիսի պայմաններում պարզ է, որ պատմագիրների հրատարակման գործը շարունակել անհնարին էր:

Նկատելի ուշագրավ երևույթներից մեկն էլ այն է եղել, որ 1870—1873 թթ. Էջմիածնի տպարանից լույս տեսած պատմագիրների մեջ, բացի Դավիթ Բեկի պատմությունից, մյուս բոլոր հրատարակությունների և ոչ մեկի վրա հրատարակչի անունը չի նշված և մենք մեր մատենագիտության բաժնում ջանացել ենք մի քանիսի անունները որոշել: Այդ անշուշտ կատարվել է հետագայում գրաքննության կողմից պատասխանատվության կանգնելուց խուսափելու նպատակով և Մայր Աթոռը ինքն է վերցրել իր վրա բովանդակ պատասխանատվությունը: Այդ հատատվում է Էջմիածնի տպարանի դեմ հարուցված վերոհիշյալ գործերով և Ուխտանեսնի պատմությունը դեռևս 1850-ական թվականներին արգելված լինելու փաստով:

Իշխան Գույիցի մի խոսարքայության օրոք 1897 թ. Էջմիածնի տպարանը ենթարկվեց

վարչական կարգով Կովկասի գլխավոր գրաքննության ատյանին: Երևանի մահանգապետի կողմից հատուկ քննիչ նշանակվեց, սակայն այնուամենայնիվ երբեմն հնարավոր եղավ շարունակել նաև պատմագիրների



Հայ պատմագիրների հրատարակություններ
Մայր Աթոռի տպարանից


ընդհատված գործը, սակայն ոչ այն ոգևորությամբ ու թափով, որ այն սկսվել էր 1870—71 թթ.: 1893 թ. լույս էր տեսել Սամուել Անեցին (հրատարակող Արշակ Տեր-Միքելյան), 1896 թ. հրատարակվեց երրորդ անգամ Առաքել Դավրիժեցու պատմությունը (հրտ. Ղուկաս սարկ. Աղավելյան, ապա Բաբկեն վ.): 1898 թ. Մատթեոս Ուռույնցու նոր ամբողջական բնագիրը (հրտ. Էմ Մամբրե վ. Մելիք-Աղամյանը և Ներսես սարկ. (ապա Ներսես վրդ. Տեր-Միքայելյան), 1903 թ. Հակոբ Կարնեցու «Տեղագիր վերին Հայոց»-ը (հրատ. Կ. Կոստանյանց), 1905 թ. Խաչատուր աբեղա Զուղայեցու «Պատմություն Պարսից»-ը (հրատ. Բաբկեն վ. Աղավելյան), 1916 թ. «Հատարան անուանց կաթողիկոսաց Աղթամարայ» գիրքը (հրատ. Մեսրոպ վ. Մաքսուդյանց) և այլն:

⁷ Վ. Գարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958, էջ 200—202:

⁸ Նույն տեղում:

Էջմիածնի տպարանի կողմից կատարված պատմագիրների հրատարակման նվիրված սույն հոդվածը թերի կլիներ, եթե չնշվեր նաև նույն տպարանից լույս տեսնող և Մայր Աթոռի պաշտոնատեղիները հանդիսացած «Ա-

րախտիքը հայագիտության զարգացման գործում: Առանձին գրքերով լույս տեսած գրքերից են Մ. Կյումրիշյանեցու «Պատմություն անցից անցելոց Սելանայ վանոց» գործը (1872 թ. հրտ. Եղիա արքեպիսկոպոս Զալալ-



Հայ պատմագիրների հրատարակություններ Մայր Աթոռի տպարանից

րարատ» ամսագրի (1868—1919) խաղացած դերի մասին ընդհանրապես հայագիտության, այդ թվում նաև պատմական սկզբնաղբյուրների հրատարակման և հետազոտման գործում: Այդ հարցին մենք անդրադարձել ենք առանձին հոդվածով⁹, այստեղ դարձյալ ուզում ենք թվել այն պատմական բնագիրների մասին, որոնք նախապես հրատարակվելով «Արարատ»-ի էջերում, ապա, տպարանից լույս են տեսել իբրև առանձին գրքեր, սակայն տեղի տրված պատճառով մեր սույն հոդվածին կցած մատենագիտության մեջ հնարավորություն չենք ունեցել անդրադառնալու: Դրանք ևս կարևոր նշանակություն են ունեցել և էլ ավելի են մեծացնում Էջմիածնի տպարանի ե-

լանց)¹⁰, Գ. Վ. Հովսեփյանը հրատարակել է Մխիթար Սասնեցին (1909) և Թովմա Մեծփեցու կյանքը (1914), Մեսրոպ Վ. Տեր-Մովսիսյանը հրատարակել է «Կարապետ եպս. Սասնացույ մերրողեան լաղագա վարուց և մահուան ս. վարդապետին Մեսրոբայ» պատմական արժեքի բնագիրը (1897), Հր. Աճառյանը՝ «Պատմություն Եղիա քահանայի»-ն (1909), Աշոտ Հովհաննիսյանը՝ «Պետրոս դի Սարգիս Գիլանեցի»-ը (1916) և այլ գործեր:

¹⁰ Արտակ եպիսկ. Սմբատյանը իր Էջմիածնի հրատարակությունների անտիպ «Գրացուցակ»-ում նշել է, որ Կյումրիշյանեցու այդ գործը առաջին անգամ հրատարակվել է նույն տպարանից 1880 թ., սակայն նման հրատարակություն ըստ հայտնի չէ հայագիտությանը և պետք է կարծել, որ թուրիմացությունը ծագել է նրանից, որ հիշյալ գործի ձևագիրը գրված է եղել նույն 1880 թ.:

⁹ Սուրեն Ե. Քոլանջյան, «Արարատ»-ը և հայագիտությունը, «Էջմիածին», 1988, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 89—92 և «Արարատ»-ի մատենագիտության (1870 թ.) առաջաբանը:

Դարձյալ թերի կլիներ մեր սույն հոգւածը, եթէ մոտացության մատնվեր դարավերջում հրատարակվել սկսած մեր պատմագիրների գիտական հրատարակության պատմության մեջ աննախընթաց երևույթ հանդիսացած «Պատմագիրք Հայոց» մատենաշարը: Այն փաստորեն դարձյալ Էջմիածնի հրատարակություն էր և միայն տպագրություն էր կատարվում Թիֆլիսում: Նրանց կողմնակի տիտղոսաթերթի վրա գրված էր. «Հրատարակություն Ա. Էջմիածնի. «Պատմագիրք Հայոց ի լույս անելու քաղաքատնային ձեռագրաց»: Հրատարակչական մասնաժողովի մասին նշված էր. Էջմիածին—Տիֆլիս: Ծրագրված էր շուրջ 50 հատորով հրատարակել մեր բոլոր հին ու նոր մատենագիրները: Այդ դժվարին աշխատանքին էին լծված հիմնականում Էջմիածնում գործող հայ ձեռագրագիտության այնպիսի ներկայացուցիչները ինչպիսիք էին Ստ. Մալխասյանը ու Մ. Արեղյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը և Գ. Եպիսկ. Հովսեփյանցը, Ստ. Կանաչյանը և Ս. Հարությունյանը և ուրիշները: Հետգհետե լույս տեսան բոլոր ձեռագիր և տպագիր օրինակների մանրագին համեմատությամբ և տարբերեցվածքներով Դազար Փարպեցու (1904 թ. հրտ. Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մալխասյանց), Ագաթանգեղոսի (1909, հրտ. Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Կանաչյանց) և Մովսես Խորենացու (1913 թ. հրտ. Մ. Արեղյան և Ս. Հարությունյան) պատմագրքերի համահավաք գիտական հրատարակության համար հիմնադիր և միանգամայն օրինակելի հատորները: Նշենք նաև, որ հիշյալ մատենաշարի վերջի երկու հատորները լույս են տեսել Էջմիածնի միաբան Սուրբաս արքեպիսկոպոս Պարգյանցի ծախսով: Այդ շարքից մաս էր կազմելու նաև Գ. Եպիսկ. Հովսեփյանցի կազմելիք Եղիշեի պատմության գիտա-համեմատական բնագիրը, որը նախնական տեսքով Դ.ԺԲ.32 ծավալով (վերջից թերի) լույս էր տեսել դեռևս 1892 թ. Մայր Աթոռի տպարանից, սակայն ձեռագրերի համեմատության գործը մա շարունակել է նաև հետագայում: 1904 թ. կազմո-

ղը մամուլում նշել էր, որ ինք համեմատել է Եղիշեի 12 գրչագիր օրինակներ և անհրաժեշտ է համարում համեմատել նաև տպագիրները, ուստի խնդրում է ունեցողներից իր տրամադրության տակ դնել աղյսիսիք¹¹: Մաշտոցյան Մատենադարանի դիվանում Գ. Վ. Հովսեփյանի արխիվում պահվում են Եղիշեի համեմատական բնագրի ձեռագրերը, որոնք սակայն անավարտ են մնացել¹²:

Հայաստանում պետականության ստեղծումից հետո Էջմիածնում ստեղծվեց Գիտ. ինստիտուտ, որը 1921 թ. հնարավորություն ունեցավ լույս բնծայելու դեռևս տարիներ առաջ պատրաստ եղող «Պատմություն Ծապհոյ Բագրատունոյ» (հրտ. Գ. Տեր-Մկրտչյան և Մեսրոպ Եպիսկ. Տեր-Մովսիսյան), «Հայ-ոռու օրինատացիայի ծագման խնդիրը (հեղինակ Աշ. Հովհաննիսյան) և Արարաճ Խոստովանողի «Վկայք Արևելից»-ը (հրտ. Գ. Տեր-Մկրտչյան):

Այսօր հայ պետականության հովանուները Վեհափառ Վազգեն Ա-ի նախաձեռնությամբ և Ամերիկահայերի նվիրատվությամբ հիմնված Էջմիածնի նոր տպարանը իր կարևոր մասնակցությունն է քերում հայրենի հայագիտության զարգացման համար անհրաժեշտ եղող գիտական գործերի հրատարակմանը:

Էջմիածնի տպարանը հակառակ անցյալում կրած իր քաղմաթիվ դժվարություններին կարևոր մասնակցություն է ունեցել հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ իրեն հայ պատմագիրների նշխարները կորստից իրկելու և առաջին անգամ նրանց տպագրության հանձնելու շնորհակալ գործում, արժանանալով ինչպես հայ ընթերցող լայն հասարակության այնպես էլ հայագիտության աշխատողների անվերապահ գնահատանքին:

¹¹ «Մշակ», Թիֆլիս, 1904, № 263, էջ 2:

¹² Անապա Լ. (Եղիշեի) մատենագիտություն, էջ 216, տես նաև սողատակի ծանոթագրությունը (№ 1), (Ե. Տեր-Մինասյանի Եղիշեի վրան Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957 թ. գրքում):

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻՑ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԵՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ

1. Թույլ ընդհանրական արարելալ երիցս երանելալ սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Ծնորհալոյ: Բաժանելալ յերիս գիրս:

Յառաջումն են թուղթք ընդհանրական գրեալ առ համօրէն ազգս, առ եկեղեցականս և առ քաղաքականս վրան ուղիղ հաւատոյ և բարի վարոց:

Յերկրորդումն՝ թուղթք միաբանութեան գրեալ առ յոյնս՝ վրան միութեան եկեղեցոյ:

Յերրորդումն՝ թուղթք առանձնականք գրեալ առ մանաւոր անձինս՝ ի զանազան պէտս:

Ի հայրապետութեան Տ. Տ. Մատթէոսի Ա. առաւածընտիր կաթողիկոսի Ամենայն Հայոց. 1865 ՌՅԺԴ, ի Ա. Էջմիածին:

Ազգ (Ա) Նշվում է, որ թեև այն գործը երկու անգամ մինչ այդ հրատարակվել էր, մեկը՝ Ա. Պետերբուրգում (1788 թ.), իսկ մյուսը՝ Կ. Պոլսում

(1825 թ.), «Մակայն շարժեալ մեր, նախ ի հաւատարմութենէ գրչեայ և ընտիր օրինակին գաղափարելոյ ի պատճենէ ինքնաձեռագրի երանելի Քեղիկեանի ի ՌՄԻԸ (1779) թուին, երկրորդ՝ ի խնդրոյ քարեպաշտից և ուսումնասիրաց ոմանց մերազնեայց, և երկրորդ՝ ի սակաւութենէ նախկին տպագրելոցն՝ փոյթ յաճին կալաք, ի տիպ արձանացուցանել զգիտութեանց զայս մատենան սրբոյ հայրապետին ըստ վերայիշեալ ընտիր օրինակին մերոյ ի լրումն խնդրողացն բազմատենէ փափագանաց, և յօգուտ համայն ազգիս»:

(Գիրք առաջին էջ 1—112): Գիրք երկրորդ (էջ 113—283): Գիրք երրորդ (էջ 285—480): «Գովեստ ճերբողական պատմագրական բանի յաղագս վարուց մեծի հայրապետին տեսան Ներսիսի կալանցոյ Հայոց կաթողիկոսի, ասացեալ տեսան Ներսիսի Լամբրոսացոյ արքեպիսկոպոսի Տարսուցի կիլիկեցոյ» (էջ 461—497):

Հնարավոր եղալ պարզել, որ 1885 թ. էջմիածնի Մայր Աթոռի տպարանից հրատարակված Ներսես Ծնորդաւոր (12 դ.), «Թուղ» Ընդհանրական—ի իբրեւ իմք է ծառայել այժմ Մաշտոցյան Մատենադարանում 912 համարի տակ պահված գրչագիրը: Այն ընդօրինակվել է 1779 թ. գրիչ Ստեփանոս քարտուղար Կոստանդնուպոլսեցու կողմից: Նույն 1797 թ. Ստեփանոս քարտուղարը ընդօրինակել է նաև նույն գործից մի այլ օրինակ ևս, որն այժմ պահվում է Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Մատենադարանի 598 համարի տակ (Տես Նորայր եպս. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր երկրորդ, Երուսաղեմ 1907, էջ 686—688): Կարևորն այն է, որ Ստեփանոս քարտուղար Կոստանդնուպոլսեցու ընդօրինակության մեջ գետնեղված հնագույն հիշատակարանների միջոցով հնարավոր է լինում պարզել, որ ինքն իր ձեռքի տակ ունեցել է 1802 թ. Թումաս գրչի մի ընդօրինակությունը, որն էլ իր կարգին ընդօրինակել է 1240 թ. մեծիմաստ և համընդհանուր կոչված Հռոմկալեցի Գրիգոր գրչի ձեռագրից: Ահա այդ վերջինս է, որ իր իսկ վկայությամբ իր ձեռքի տակ է ունեցել Ներսես Ծնորդաւոր այս մեծարժեք պատմական արժեք ունեցող վավերագրերի ինքնաձեռագիր օրինակը: Գրիգոր գրիչը այդ մասին գրել է. «Եւ Գրիգորիս մեղապարտ գրիչ և լետին ծառայ Բրիստոսի, գտի գտորք թուղթս սուրբ տեսան Ներսիսի գրեալ գրով սուրբ ձեռին իւրոյ. զկնի ԿԷ (67) ամի վերափոխման իւրոյ յատենացս, և ի հնացեալ և ի տեղուղէ տեղ հատեալ թղթոցն, մեծաւ աշխատութեամբ եւ ջանի յերկրեցի եւ ճորոգապէս ի մատենիս գրեցի, զի մի պնդափայտ սրբոյն Աստուծոյ քան ի վայր անկեալ մոռացի եւ աղաւաղեալ կորիցէ: Այլ որպէս զամբար լուսափայլ պայծառացեալ ծաղկեացի յեկեղեցիս Հայաստանեայց անջինջ յիշատակաւ...» (Մաշտոցյան Մատենադարանի ձեռագիր № 912, էջ 38բ):

Այսպիսով, ինչպես նշված էր սույն տպագրության առաջարկում, Ծնորդաւոր այս աշխատությունը երրորդ անգամ լինելով հայ իրականության մեջ լույս ընծայելով, էջմիածինը ոչ միայն քավարարում էր

ընթերցողների պահանջները, քանի որ սույն գրքի նախորդ հրատարակությունները այդ ժամանակ շատ հազվագույտ էին դարձել, այլ և այն, որ սույն հրատարակության շնորհիվ շրջանառության մեջ է դրվել այնպիսի մի ձեռագիր օրինակ, որը մի տեսակ շահալից է եղել հեղինակի բուն իսկ ձեռագրին, և, որը սակայն մեզ չի հասել:

2. Զաքարեայ սարկաւագի պատմագրութիւն, ՌԹԻ—1870, ի տպարանի սրբոյ կաթողիկէ էջմիածնի ի Վաղարշապատ:

Ազդ (Ա): Ժամկ առաջին հատորի պատմութեան (Գ—Դ): Առաջին հատոր (էջ 1—87) գլուխ Ա—ԽԸ: Ժամկ երկրորդ հատորի պատմութեան (Ա—Բ): Երկրորդ հատոր էջ 1—143, գլուխ [Ա]—ԿԸ: Ժամկ երրորդ հատորի պատմութեան (Ա): Երրորդ հատոր (էջ 1—46, գլուխ Ա—ԺԶ):

Հրատարակության անանուն պատրաստողը նշում է, որ Մայր Աթոռի մատենադարանում ունեցել է հեղինակի ինքնաձեռագիրը, որից էլ կատարել են այդ հրատարակությունը, ուղղելով կենտադրությունը, տառախալաները և ստորին լուսանցքում ափեպանելով օտար քառերի հայերեն թարգմանությունը, գրելով, որ «Ընծայեց ի վայելս մերոց և օտարաց բանասիրաց»: Վերջում հույս է հայտնվում, որ սույն պատմիչի երկրորդ հրատարակության ժամանակ, եթե կարողանան ձեռք բերել ամբողջական մի ձեռագիր հնարավոր կլինի մայր ձեռագրում նկատվող բնագրային թերիները լրացնել: Զաքարիա Քանաքեղոս (17 դ.) պատմության սույն առաջին և միակ հրատարակությունը ևս կատարվել է «Հրամանա Տ. Տ. Գեորգեայ Դ վեհափառ և սրբազնագոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց»: Գրքի սկզբում կա հետևյալ ձեռք. «Նուէր առ վեմնափայլ և հայրենաւոր Յովհաննէս Ստեփանեան Յովնանեանց ի հաւատիս խորին զգացմանց և ի նշան երախտագիտութեանց»:

Ձեռագիրը հրատարակվել է այժմ Մաշտոցյան Մատենադարանում պահվող № 1662 գրչագրի հիման վրա (գրված 1698 թ. Հովհաննաթանցում): Անհրամբելի է նշել, որ սույն պատմագրի ոչ տիտղոսաթերթի և ոչ էլ սկզբի «Ազդ»-ի տակ ոչինչ չի գրված բնագիրը հրատարակության պատրաստողի մասին և նրա աճումը մինչև այժմ էլ անհայտ է մնում հայագիտությանը: Սակայն եթե նկատի ունենանք այն իրողությունը, որ տվյալ ժամանակաշրջանում էջմիածնի միաբանության մեջ հայագիտական հարցերով մեծ մասամբ զբաղվողը Արեւ արք. Մխիթարյանն էր, որը այդ շրջանում վայելում էր նաև Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ հանդեսի» առաջին խմբագիրը լինելու պատիվը, ապա պարզ կլինի թե սույն պատմագրի հրատարակողը ևս ինքն այն է լինելու: Մեր այս կարծիքի օգտին է խոսում հատկապես այն հանգամանքը, որ «Արարատ»-ի 1870 թ. 5-րդ համարում (էջ 151—155) լույս է տեսել Արեւ արք. Մխիթարյանի ստորագրությամբ «Կենսագրութիւն Զաքարիայ պատմագրի սարկաւագի Յովհաննաթանց» խորագրով հոդվածը, ուր նշում է, որ «Զաքարիա Սարկաւագի պատմագրութիւնը Ս. Աթոռոյ տպարանէն լետ ոչ քաղում արուրք ի լոյս կ'ընծայ-

ուի...»: Իր հողվածի շարունակության մեջ հեղինակը խոստանալով, որ «Ուրիշ անգամ առանձին տեղեկություն կտանք պատմագրության վրա», անդրադառնում է նաև պատմության բովանդակության և արմնքին և մեջ բերում նրա տպագրության ընթացքում եղող պատմության գանձազան մամր հատվածներ: Վերջում հողվածագիրը հույս է հայտնում, որ ընթերցողները սույն պատմագրի միջոցով ծանոթանալով Հովհաննիսյանի երկերին շնորհությամբ, կհրապարակեն նրա վերամոտրությանը: Արեղ արք. Մխիթարյանը խոստանում է նաև «Փոքր միջոցում նորա (իմա Հովհաննիսյանի) տեղագրությունն էլ Արարատի միջոցաւ» հրատարակել, նշենք նաև, որ նույն Արեղ արք. Մխիթարյանը «Արարատ»-ի 1872 թ. (էջ 381—387) հրատարակել է մի այլ հողված, որը ստորագրել է միայն Ա արքեպիսկոպոս: Նկատի ունենալով այս բոլորը կարծում ենք, որ սխալված չենք լինի, եթե Չաքարիա սարկավագի պատմագրության հրատարակիչը համարենք Արեղ արք. Մխիթարյանին: Այս առթիվ նշենք նաև, որ սույն պատմագրի այս միակ հրատարակությունը դեռևս չի ունեցել իր երկրորդ տպագրությունը և այն շարունակում է բախարսիկ հայագիտության պահանջները: Մոսկվայում ԱԼԷՄ Գիտությունների ակադեմիայի պատմության բաժանմունքի և Մաշտոցյան Մատենադարանի հրատարակչությանը 1969 թ. լույս տեսավ Չաքարիա Բանաբեղու ուսերեն թարգմանությունը, Յրաժույցում և ծանոթագրություններով հանդերձ, որը կատարել է Մաշտոցյան Մատենադարանի ավագ գիտական աշխատակից Մ. Դարբինյանը:

3. Մինաս վարդապետի Համդեցույ ազգաբանությունը Հայոց, 1870—1880-թ., ի տպարանի սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, ի Վաղարշապատ:

Ցատաշարան (Ա—Բ): Ազգաբանությունը թագաւորացն Հայոց՝ սկսեալ ի նախահօրէն Ադամայ՝ որդոց յորդիս, համառօտեալ՝ որպէս զգաւագնացիրը՝ թէ ուստի՝ եւ Հայոց և որո՞յ աղապա կոչեցան Արամեան (էջ 1—14): Գաւազան թագաւորութեան ազգին Արշակունիաց (էջ 14—27): Գաւազան իշխանութեան եւ թագաւորութեան Հայոց, որք ի Հրէից խառնեալք էին յազգս Հայոց եւ կոչեցան Բագրատունիք (28—36): Գաւազան իշխանութեան Հայոց վերջնցն Ռորինեանց կոչեցեղոց, որք թագաւորեցին ի Կիլիկիայ, սկզբնաւորեալք ի թուակահիս Հայոց ՇԻՆ, եւ իշխեալք մինչ ի ԴԷ թին (36—52): Կարգ և պատմութիւն կայսերացն Հռոմայեցոց (52—144): Վերջում ունի հետևյալ հեղինակային հիշատակագրությունը. «Եւ ՌՈՍՏՈՎ (1698) թուին շարադրեցաւ կարգ թագաւորացս և անցն աշխարհիս Հայոց ի Մինաս վարդապետէ Համբեցոյ»:

Առաջարկում ասված է. «Ո՛չ իբրև գերեզի ինչ և զկարևոր հնություն ի հիւք ազգային պատմության, այլ իբր նշխար ինչ մատենագրությանն նախնաց՝ յանդուք գաղափարայն զայս Ազգաբանությունը թագաւորաց մերոց զարարեալն ի Մինաս վարդապետէ Համդեցոյ՝ ի պատրիարքոն Ս. Շրուստեանի՝ տպագրութեամբ՝ ի թանգարան Հայերէն դպրութեանց...»: Հրատարակողի անունը անծանոթ է մնում:

Վերահիշյալ աշխատությունից շատ ավելի արժեքավոր է Մինաս Համդեցու «Թրագրություն»-ը, որի ինքնաշնորհագիրը պահվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Մատենադարանում 1316 համարի տակ: Այդ գրչագրում նկարագրված են 1630—1704 թթ. տեղի ունեցած դեպքերն ու հեղինակի կողմից կատարված թագմաթիվ ճանապարհորդությունները:

4. Արրահամ կաթողիկոսի Կրետացույ պատեագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին Պարսից, ՌՅԺԹ—1870, ի տպարանի սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, ի Վաղարշապատ:

Ցատաշարանություն (Ա—Ի): Արրահամ կաթողիկոսի Կրետացույ Պատեագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին Պարսից (գլուխ Ա—ԵԴ, էջ 1—80): Կոնդակ Արրահամ կաթողիկոսի Կրետացույ (Գրեցալ թուին ՌԻՉԵ (1738) փետրվարի քսանն ի Մոլդան. էջ 93—100): Գաւազանութիւն Անի քաղաքին զոր գրեալ է Արրահամու թարմապետի եւ քանի սալասաւորի եւ առաջնորդին Թրակիոյ (էջ 101—109): Համառօտ բառարան տանկերէն քաղից որ ի մատենիս (111—122): Հայ թարգմանութիւնք ռուսամատր ուղերթից եւ մաղթանաց (էջ 123—124): Ցանկ (125—129):

Սկզբում, «Նուր առ մեծապատիւ եւ ազգաւոր պարոն Մկրտիչ Սանասարեանց ի հաւատիս ջերմութեամբ յգացմանց եւ ի նշան երախտագիտութեանց»:

Առաջարկում ասված է. «Ո՛չ դրուստեալս պետ ունի և ո՛չ աւելորդ քանահիստութեանց կարօտի սոյն այս պատմագրութիւն Արրահամու Գ. կաթողիկոսի Կրետացույ՝ առ ի շարժել զգուր և զհետաքրքրական գուշադրութիւնք բանասիրաց միաբանից և օտարաց, և հրաւիրել զնոսա ի վերծանութիւն սորին...»: Իր անունը դարձյալ մեզ անծանոթ թողած հրատարակիչը նշում է, որ պատմագրությունը հրատարակվել է մի գրչագրից, որը հաղանաբար հեղինակի գրչին է պատկանում և կամ ավելի հաղանապատ է հեղինակի կինդամության օրոք նրա հրամանով է ընդօրինակվել հեղինակի սևագրի օրինակից և ապա իր կողմից կատարվել է մի շարք սրբագրություններ: Նշվում է, նաև, որ այլ ձեռագրերի օգնությամբ սույն գրքում հրատարակվել են նաև Արրահամ Կրետացու այլ աշխատությունները: Կրետացու պատմագրությունը հրատարակվել է այժմ Մաշտոցյան Մատենադարանում պահվող № 1674 գրչագրի հիման վրա: Ներկայումս Արրահամ Կրետացու (17 դ.) քննական քննադիր պատրաստել է հրատարակության Մաշտոցյան Մատենադարանի գիտական աշխատող Նարեկ Ղորղանյանը 9 ձեռագրերի հիման վրա, այդ թվում առաջին հերթին նաև տպագրի հիշյալ օրինակը: Հանքեն քննագրի հետ լույս է տեսնելու նաև Կրետացու ուսերեն առաջին թարգմանությունը, կատարված դարձյալ Ն. Ղորղանյանի կողմից: Նշենք, որ ակադ. Մ. Բրուսի կողմից Արրահամ Կրետացու ֆրանսերեն թարգմանությունը կատարվել էր վերահիշյալ 1870 թ. առաջին հրատարակությունից:

5. Միմեռն վարդապետի Ապարանցույ վիպաաւանութիւն սակս Պաղատունեացն զարմի եւ Մամիկոնեանցն սեռի, 1870—1880-թ., ի տպարանի սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, ի Վաղարշապատ:

Յառաջաբան (Ա—Դ): Միմեոս վարդապետի Ապարանցույ փխպասանություն ասկա Պայթաու Ռացն գարմի եւ Մամիկոնեանցն սեռի (1—128): Յիշատակարան շարագրութեանն եւ պատմութիւն Ապարանից տուր Նշանին (129—187): Ի վերայ առման թարիգու, որ առաւ ի յօմանէ, և այլ ողբ ի վերայ տառապեալ ազգիս Հայոց, ասացեալ ի Միմեոս վարդապետէ (188—182):

Առաջաբանում ի միջի այլոց ասված է սույն բնագրի մասին հետևյալը. «Երբև զմշտար մատենագրութեանց նախնեաց մերոց՝ ուրախութեամբ ունին ողջունել և ընդունել մերազնեայ բանասերք գիրատարակութիւն սորին...»: Սույն բնագիրը որի հրատարակիչը դարձյալ անծանոթ է, հրատարակվել է այժմ Մաշտոցյան Մատենադարանում պահված № 1898 գրչագրից: Հիշյալ ձեռագիրը ընդօրինակվել է 1869 թ. Ամրդուլու վանքում Հակոբ գրչի կողմից, նրա տառգրիչ է եղել Վարդան Բաղիշեցին: Միմեոս Ապարանցու (16—17 դդ.) այս գործը թեև չափածո է, սակայն հայկական հնագույն պատմական աղբյուրներից իր կատարած քաղվածքների շնորհիվ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հայ պատմագրության համա: Նա նյութեր է քաղել պատմահայր Բերենացուց, Ղ. Փարպեցուց, Անանուհից, Սեբեոսից և ամենայն հավանականությամբ մեզ չհասած աղբյուրներից: Էջմիածնի կողմից կատարված Ապարանցու երկերի այս առաջին և միակ հրատարակությունը մինչև այսօր էլ ունեցել է իր կարևոր նշանակությունը: Սակայն այժմ երբ Երևանի Մաշտոցյան Մատենադարանում պահվող Ապարանցու երեք գրչագրերի խմբում կա այնպիսի գրչագիր, որը № 6548 է և ծամանակակից է հեղինակին, ընդօրինակված լինելով մեր աշակերտ Անանիայի կողմից և հեղինակի ս.մ. միջակայն հսկողությամբ և այն գրեթե ունի հեղինակային ձեռագրի արժեք (տես Կ. Հ. Սուքիասյան, Միմեոս Ապարանցու Վիպասանության աղբյուրները, «Լրագրեր», հաս. գիտությունների ԳԱ, 1970, № 8, էջ 80) հարց է առաջանում այն կրկին հրատարակելու: Նշենք, որ Էջմիածնի 1870 թ. միակ հրատարակության ծամանակ միացն մեկ ձեռագիր կար Մայր Աթոռի Մատենադարանում, իսկ վերոհիշյալ հնագույն գրչագիրը մուտք է գործել Մատենադարան միայն 1924—1936 թթ. ընթացքում: Այժմ Մաշտոցյան Մատենադարանի գիտական աշխատակից Կ. Սուքիասյանը պատրաստում է Միմեոս Ապարանցու մատենագրության մոտ քննական հրատարակությունը, որը հիմնված լինելով հեղինակի ծամանակակից գրչագրի վրա, գերծ կլինի տպագրում նշմարվող մի շարք բնագրագիտական աղավաղումներից:

6. Ուխտամեն Եպիսկոպոս Բատուած .առաջին Պատմութիւն Հայոց, ԻՋԻ—1871, ի տպարանի Սըրբոյ Կաթողիկէ Էջմիածնի ի Վաղարշապատ (Հրաման S. S. Գեորգյայ Դ վեհափառ և սրբազնագոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց):

Յառաջաբան (Ա—Բ): Ուխտամեն Եպիսկոպոս, Բատուած առաջին. Պատմութիւն Հայրապետաց և թագաւորաց Հայոց (Ա—Ը գլուխներ, էջ 1—112): Ծանկ առաջին հատուածի (էջ 118—116): Ուխտամեն

Եպիսկոպոս, Բատուած երկրորդ. Պատմութիւն բաժանման վրաց ի Հայոց (Ա—Ը գլուխներ, էջ 3—138, վերջից թերի): Ծանկ երկրորդ հատուածի (137—141):

Առաջաբանում ձեռագրի հրատարակիչը տալիս է ձեռագրի մասին տեղեկություններ և խոսում իր կատարած աշխատանքների մասին, ի միջի այլոց գրելով.

«Այլ ցախմք, զի ո՛չ յաշողեցաք գէթ այլուտ գտանել զամբողջ աշխատութիւնն Ուխտամենի: Մի միայն օրինակ գոյր ի Մատենադարանի Մայր Աթոռոյ՝ քոլորագրով օրինակեալ իբր ի ԺԱ կամ ի ԺԲ դարոյ, ի վերջն պակասին թերթք, որով կհաստ մնայ կոնդակն Ծրարեբարակն Աբրահամու Ա կաթողիկոսի և շարունակութիւն պատմութեան. և ո՛չ գիտեմք, պատահմամբ էին անկեալ՝ եթէ գիտութեամբ հառեալ ի քաց քարձեալ ի թշնամեաց...»:

«...Համարք զիսոց սորա էին խառն և պակաս ըստ մեծի մասին, գրչութիւնն քաղմաշիւթ, զորս լուացուցաք յարմարելով ըստ կարգին, մոյակէս զառն փոխեալ յօ ըստ այժմու տոկրական գործածութեանց, և ի տեղի եղեալ և անվերծանելի քառից ինչ և քանից կետադրեցաք, իսկ զանիմատսն կամ ըստ մեզ դժուարիմացսն՝ որք գուցէ իցեն գրչասկաւք եղար նորոքագրով»:

Ուշագրավ են հրատարակչի հետագա տողերը ուր նշելով համոզեմ, որ հրատարակվածը թեև թերի, սակայն փրկելու համար կորստից այն ցանկանում է տպագրության համաձայն, ապախտվ սեփականություն դարձնելով այս պատմիչին ևս հայ և օտար բանասերներին:

«Արդ փութացուք ընծալել ի լոյս՝ զոր ի ձեռին էր՝ ի վայել մերոց և օտարաց, յանձնելով բանասիրաց ազգիս, զի եթէ գտանիցեն զամբողջն մատենագրութեանս՝ յանկեան ուրեք կամ ի վանօրայս ինչ, ջան ի գործ արկցեն և զմեզ արձամացուցանել ի տիպ»:

Երկնշնելով մեր ի ծանեաց ծամանակին, զոր ինչ պիտանի մատենագրական մանաւանդ պատմական երկք վաստակոց մերոց նախնեաց գտանին ի Մատենադարանի Մայր Աթոռոյս, թէև իցեն թերիք և պակասք, իղձք են մեզ՝ տալ ի լոյս, զի մի՛ իսպառ անհետացին յապագային»:

Ուխտամեն սեքստացվոց Եպիսկոպոսի (10 դար) պատմության ներկա առաջին և միակ հրատարակությունը կատարվել է Մաշտոցյան Մատենադարանի № 1774 ձեռագրի հիման վրա և որից են արտագրված Ուխտամենի հայտնի քոլոր գրչագրերը, որոնք այժմ պահվում են Երևանում, Լեւոնգրադում, Փարիզում և Վենետիկում: Պետք է նշել, որ այս հիմնական ձեռագրի վերաբերյալ առաջաբանում նշված այն պարբերությունը, ըստ որի կարծվում է, որ այն պատկանում է ԺԱ—ԺԲ դարերի գրչության, թյուրիմացության արդյունք է, քանի որ այն իրականում ընդօրինակված է ԺԷ դարում: Մեզ հայտնի չէ թե ո՛վ է եղել Ուխտամենի պատմության հրատարակիչը: Պետք է կարծել, որ այս պատմագրի հրատարակողը պետք է լինի կամ Ոսկան Հովհաննիսյան-Երևան-

ցին, որը հայտնի է մեզ մեկ այլ պատմագրքերի հրատարակությամբ: Նրա օգտին է խոսում մեկ Մաշտոցյան Մատենադարանի № 3732 ձեռագիրը, որը Ոսկանի ձեռքով կատարված Ուխտանեսի պատմության մի նորը ընդօրինակություն է (1852 թ.), սակայն իր ներկա փնակով չի համընկնում տպագրի հրատարակչական լուրհամալուրությունների: Ուխտանեսը կարող էր հրատարակության պատրաստած լինել մեկ Աթել արքայ. Միսիսարյանը, որը «Արարատ»-ի առաջին խմբագիրն է եղել և այդ ժամանակ հայտնի է մեկ իր պատմաբանափրական հեղինակություններով: Մենք հավելված ենք կարծելու, որ դիտարկյալ կերպով չի նշվել Ուխտանեսի պատմության հրատարակչի անունը շրջահայեցողության նպատակով, մանավանդ, որ Էջմիածնի միաբանությանը հայտնի էր, որ դեռևս մույն դարի 50-ական թվականներին այդ մույն պատմիչի հրատարակումը արգելվել էր ցարական գրաքննության կողմից: Մեր ատածը ապացուցվում է մեկ այլ փաստով, որ ինչպես նշել ենք մեր առաջաբանում, ցարական գաղտնի ոստիկանության կողմից Ուխտանեսի պատմությունը համարվել է ուղղափառ հավատի դեմ ուղղված գործ և առաջարկվել է խիստ հակողության տակ վերցնել Մայր Աթոռի տպարանն ու նրա հրատարակությունները:

Ուխտանեսի առաջին անգամ լույս ընծայումը ևս Էջմիածնի հրատարակության կարևոր ծառայություններից մեկն է հայագիտության համար, քանի որ մինչ այդ նույնիսկ Հ. Մ. Չամչյանին այն հայտնի էր միայն իր անունով, իսկ նրա գործի մասին գաղափար ունեցող չկար առհասարակ: Նրա հրատարակչը կատարել է թեև որոշ աշխատանք աղավաղումները հարթելու առումով, սակայն ինքը ևս թույլ է տվել նոր աղավաղումներ, քառերի և երեքնմ անգամ պարբերությունների բաց թողումներ, հատուկ անունների սխալ փոփոխումներ և այլն: Բնագրի նկատմամբ կատարված այս լուրջ մշակումների հետևանքով էլ այդ հրատարակությունը մեր այժմյան բանասիրության պահանջները քաղաքարել չի կարող և այդ պատճառով էլ տողերիս գրողը տարիների որ նետնամուխ է եղել Ուխտանեսի գիտական հրատարակության աշխատատար գործին: Այն հին հրատարակության հետ համեմատած կունենա որոշակի առավելություն, քանի որ ոչ միայն գերծ կլինի թագմաթի աղավաղումներից, այլև Մաշտոցյան Մատենադարանի ձեռագիր-պատմաիկների հավաքածուում մեր կողմից հայտնաբերված Ուխտանեսի երկրորդ հատվածի վերաբանի շնորհիվ, այն կդառնա ալիկի ամբողջական:

7. **Դասիք** բեզ: Ընտիր պատմություն Դասիք բեզին և պատերազմաց Հայոցն Խափանու, որը եղև ընդդեմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի Տեառն 1722, ևս Հայոց 1171: Զորս ետուն գրել, որը ի սկզբանէ մինչև ցլախման յառաջադէմ լիպը էին լամնայն պատերազմունս, և ակամատես իրացն եղելոց, այսինքն. Ստեփաննոս Վրդանիսեան, որ ի տանէն էր Եաֆումեան, ի գաւառէն Փոքր Սիւնեաց,

և յաւանէն Եկտատանաց, և այլ ոմանք ընդ մմա,... վարդապետի...:

Հրատարակութեամբ ի լոյս ընծայեաց հանդերձ յաղկածովք Արգար Ստեփաննոսեան Գուլամիրեանց: ՌՅԻ—1871, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ: Էջմիածնի ի Վաղարշապատ:

Յիշատակ հոգւոյ հանգուցեալ (անշապտացեալ) քաղմերախո Տորն իմոյ Ստեփաննոսի Մնացականեան Գուլամիրեանց (չափածո էջ Ա—Բ):

Իրրև յառաջարան. իմ սիրելի հայրենակիցներին մի քանի խօսք (Գ—ԺԴ):

Պատմության բնագիրը (էջ 1—78): Հավելված առաջին. «Լեւոնի վեցերորդ արքային Հայոց մահուան վրայ մի քանի տեղեկությունք, հանդերձ թարգմանութեամբ, ի քարեյիշատակ Խաչատուր զպրէ Աբովեան (ի մամակագրութենէ ռուս ճանապարհորդին այսինքն պարոն Կարամզինու, յամի 1790 ի Փարեզ (81—88): Հավելված երկրորդ. «Հնգիկին հարուածք Տիֆլիսայ, գործ քարեյիշատակ Սերովբէ վարժապետի Պատկանեան» (Գուլամիրեանցի խոսքը այդ մասին (84—88): Հավելված երրորդ. Ողբ Գեորգեայ իշխանի Խուրով Մեղիսեղեկեան. ի վրդովման Հայաստանի ողբալով ողևալ (87—88) (Արտատպ. «Արարատ»-ից, 1868, էջ 115): Հավելված չորրորդ. Ազգային վիճակի դիտողութիւն և նորա յառաջադիմութեան կամ լուսատրութեան համար խորհրդածութիւնք (89—114):

Ինչպես պարզվել է, Ստեփան Եաֆումյանը Վենետիկ գալով իր տեսածն ու լսածը թելադրել է Միսիթար Արքաճոր աշակերտներից Հ. Ղուկաս Ստեփանյան Սերաստացուն (մահացած 1751 թ.), որը և այդ ակամատեսի վկայություններից գրել է վերոհիշյալ պատմությունը (Հ. Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1898, էջ 801): Այս գործից առաջինը օգտվել է Հ. Մ. Չամչյանը իր «Պատմություն Հայոց»-ի Գ հատորում: Այս պատմության վերոհիշյալ միակ հրատարակության առաջաբանում Գուլամիրեանցը ի միջի այլոց գրել է. «Ազատելով ահա այս ձեռագիր ազգային յիշատակարանը փոշայի անկյուններից և մաշող ժամանակի ժանգից, ու նվիրելով մեր սիրելի ազգայնոց, չենք կարող լուրջամբ անցնել՝ այս հետաքրքրական և միանգամայն ուշադրության արժանի պատմության վրա, որի գրիչը համարյա թե՛ ս. Թարգմանչաց ուկեղնիկ դարու ճաշակն է կրում, և համարյա մի նոր ս. Եղիշև է հանդիսանում Սյունյաց նոր մահապալկների համար (որպես կտեսանեն ընթերցողը) չնայելով թե՛ պատմագիրը վերջին դարի ծնունդ է (ԹՅ): Եարունակության մեջ հրատարակիչը այն ժամանակ դեռևս անձնաճանաչ լինելով նրա հեղինակի ինքնությունը, ցավ է հայտնում, որ «Անխոհեմ և անգլա մարդիկ անհետացրել են սույն ազնիվ հեղինակ վարդապետի անունը, ջնջելով նրա անունը և տոհմանունը, միմիայն վարդապետ քառը թողելով... (ԺԶ): Հետագայում Արսեն վ. Ղլտնյանը իր մի հոդվածում («Արարատ», 1906, էջ 382—391) մեջ թերեզ մույն պատմությունից մի այլ ձեռագիր հատված, որ պատմվում է մեկ Ավետիք քահանայի հետագա կյանքի մասին:

Մաշտոցյան Մատենադարանի գիտական աշխատողներ պրոֆ. Լ. Խաչերյանը և Հ. Խաչատրյանը տպագրության են պատրաստել, ներածությամբ և ծանոթագրություններով հանդերձ, Դավիթ քեզի պատմագրության գիտական համեմատական քննագիրը Մաշտոցյան Մատենադարանի հինգ և Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի երկու ձեռագիր օրինակների հիման վրա: Այդ հրատարակության աղբյուրն լույս է տեսնելու նաև նույն պատմագրի աշխարհաբար թարգմանությունը:

8. **Ջամբռ**, գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի և պարունակող քննադրող որպիսութեանց սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն:

Համաժողովեցեալ և շարադրեալ ի Սիմօնէ ցաւաւար և վշտակոծ կաթողիկոսէ Երեսնացոյ: Ի փառս Աստուծոյ եւ ի յօգուտ նոյնակերտի Աթոռոյս, ի յեմարան եւ ի հեշտութիւն ի սմա նստող Հայրապետաց, գործակալաց եւ համայն հարազատից պաշտօնէիցն ստրին:

Յամի ներարժմութեան Տեառն հազար եօթն հարիւր վաթսուն եւ հինգ 1765, ՌԶԼԷ: Իսկ ըստ Հայոցայ թուականի, հազար երկու հարիւր տասն եւ չորս: Ի Վաղարշապատ, ի տպարանի Աթոռոյ կաթողիկէ Էջմիածնի. ՌՅԻԳ—1878:

Աղ. (Ա—Դ): «Ջամբռ»-ի քննագիրը (Էջ 1—301, Յատաշարան Գլուխ Ա—ԻԵ):

Առաջաբանում, մեզ անհայտ մնացած հրատարակիչը գրել է. «Մի օրինակ ենք էր մատենիս Ջամբռ անուանելոյ, որ իբրև գանձարան մթերէր յինքնան ոչ միայն զհակիրճ եկեղեցական պատմութիւն Հայաստանեաց յառաջին դարէ անտի ցերրոդ քառորդ եօթնաստամերորդի դարու, և յատկապէս զինչ ինչ անցեալ և զժամանակակից երևելի և նշանաւոր անցն և զտառապանս Էջմիածնի և այլն, այլև զտեղեկութիւնս և զցուցակս ազգի ազգի կալուածագրոց, հողոց, գիւղօրէից, արքունական հրովարտակաց, արտօնագրոց, կալուածագրոց, ընծայագրոց և այլոց, և այլոց, զորս աշխատասիրեալ է արժանաշիշատակ և բազմարդիւն կաթողիկոս Ամենայն Հայոց Սիմօն Երևանցի ցվերջին ամս հայրապետութեան իւրոյ» (Ա): Ծարունակության մեջ ինչպես նախորդ հրատարակություններից մի քանիսի առաջաբանում ևս նշված է, հրատարակողը ջանում է ծած առաջ այն ևս տպագրության հանձնելու և այդպիսով կորստից փրկելու նման մի մեծարժեք աշխատություն. «...ի վերայ այս ամենայնի» երկուցեալ ի ծանեաց ծածականակն» թողեալ զայլ և այլ թերությունս և առանց յայտելոյ զտպագրութիւն ստրին, զի ոչ բազումք ամբ էին յորմէ հետէ ազատեցաւ սա ի գերութենէ... փոյն» եւն ևս ի լոյս ըստ հրամանի Վեհ. հայրապետի Ամենայն Հայոց տեսնո և տեսնո Գեորգեայ Դ ազգաւոր կաթողիկոսի, զի մի որպէս երբեմն զրկեսցի Մայր Աթոռս և ազգ մեր նաև յայսպիսոյ պատուական գանձարանէ:

«Ջամբռ»-ի հրատարակիչի անունը ևս ինչպես նշեցինք հայտնի չէ մեզ: Սակայն գրքի վերջում ևս

նման Դավիթ քեզի հատորից կա բաժանորդների մի ցուցակ ուր կան բոլոր նրանց անունները, որոնք նպատակն են գրքի տպագրության ծախսը հոգալու գործին: Վերջում այստեղ ևս նույն է հայտնվում, որ եթե առաջիկային ստատորոշներ լինեն տպագրության գործին ապա «նպատ մեծ ընծայն հայկական մատենագրութեան և գրականութեան»: Այս բոլորը մեզ հիշեցնում են Դավիթ քեզի հրատարակիչ Արզար Ստեփանույան Գույամիրյանցին, որը և կարող է Սիմօն Երևանցի կաթողիկոսի այս մեծարժեք աշխատության հրատարակիչը լինել: Մոսկվայում 1858 թ. ՍՄՀՄ Գիտությունների ակադեմիայի արևելագիտական ինստիտուտի հրատարակչությամբ լույս տեսավ «Ջամբռ»-ի ռուսերեն թարգմանությունը կատարված ակադեմիկոս Սո. Մալխասյանցի կողմից, գիրքը խմբագրել և առաջարկել գրել է Պ. Հարությունյանը, իսկ ծանոթագրել են ակադ. Սո. Մալխասյանցը և Պ. Հարությունյանը:

8. **Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիծեցոյ:** Սակս դիպումնոց Հայաստանեայց և գաւառիս Արարատաց և ժաւին Գողթան գաւառի, «սկսեալ ի ՌԴԻ թուականէն Հայոց մինչ ի ՌԺԺԻ թ.:

Ըստ ձեռագիր օրինակին արտագրելոյ ծախիւք եւ հսկողութեամբ հեղինակին: Տպեալ հրամանա Սիմօնի Ա. Էջմիածնի, ի Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, 1884—ՌՅԼԳ:

Ջեկուցումն (Ա): Նախադրութիւն առաջիկայ գրոցս պատմութեան (Հեղինակին. Բ): Առաքել Դավիթիծեցու պատմության քննագիրը (Էջ 1—518): Ավետիք երեցի 1888 թ. Երևանում «Հնդկականեալ Ս. Կաթողիկէ եկեղեցոյ» գրած հիշատակարանը (519—520): Ցանկ գլխոց (521—524):

Ոսկան վ. Երևանցու կողմից Ամստերդամում 1868 թ. առաջին անգամ Առաքել վ. Դավիթիծեցու (17 դար) պատմությունը լույս ընծայվելուց հետո, սույն երկրորդ հրատարակությունը պատրաստելիս, սրբագրվել և ծանոթությունների միջոցով ցույց են տրվել Ոսկան Երևանցու հրատարակության սխալները, քանի որ ինչպես նշվում է «Ջեկուցման մեջ. «...Ցայմանէ յայտնի երևի թէ Ոսկան ի տպագրելն իւրում զպատմութիւն Առաքել վարդապետի ըստ կամաց իւրոց աղջատեալ է, կամ արդարև զաղատեալ օրինակ ինչ ունելով ի ձեռին» սրբագրեալ ըստ կամաց իւրոց»: Կրկին հրատարակելու պատճառը համարվում է այն, որ Ոսկանի տպագրածը արդեն իսկ սպառված էր, իսկ մյուս կողմից «ըստ խնդրոյ րազմաց մերազնէից բանասիրաց» ի նորոյ ի տիպ արձանագրուցք ի տպարանի Մայր Աթոռոյս ըստ հնագոյն օրինակին Աթանաս դպրի...: Ի տպագրութիւնս յայս փոյն» կալաք ուղղել միայն զվրիպակ գրչին և զտառապանս զսուղ տարբերութիւն յօրինակէն Աւետիք երիցու (երեք ամօք յետոյ գրեալ) և զթերութիւնս Ոսկան վարդապետի» ցուցանելով ի ծանօթութեան: Այսպիսով այս հրատարակությունը կատարվել է երկու ձեռագրերի և Ոսկան վ. Երևանցու հրատարակության համեմատությամբ: Այդ գրչագրերն են Մաշտոցյան Մատենադարանի ներկայումս № 1772

(ընդօրինակված 1666 թ. Երևանում Ավետիս երեցի կողմից) և № 1773 (ընդօրինակված 1663 թ. Կարբիում Աթանաս գրչի կողմից) ձեռագրերը:

Ո՛վ էր կամ ո՛վքեր էին հրատարակության պատրաստել Դավրիժեցու այս երկրորդ տպագրությունը: Այդ մասին ոչինչ չի գրված գրքում: Ինչպես տեսանք նշված է եղել միայն, որ այն լույս է տեսել Էջմիածնի Սինդի հրամանով: Բարեբախտաբար շնորհիվ Արտակ եպսկ. Սմբատյանի մենք ճանաչելություն ունենք գիտենալու հրատարակիչների անունները: Իր Էջմիածնի հրատարակությունների գրացուցակում Արտակ եպսկ. Սմբատյանը իբրև Առաքել Դավրիժեցու պատմության 1854 թ. հրատարակության պատրաստողներ՝ հիշատակում է Հուսիկ վ. Մովսիսյանին և Սարգիս Գևորգուն (տես Մաշտոցյան Մատենադարանի դիվան, Գ. արք. Հովսեփյանցի արխիվ, թղթապանակ № 84, վավերագիր № 3ա, էջ 162):

Այս հրատարակության առիթով գերմանացի հալագետ Ջր. Մյուլլերը Վիեննայի գերմաներեն գիտական մի հանդեսում գրախոսություն է հրատարակել: Նա խոսելով Ամատերգաժում տպագրված առաջին հրատարակության խիստ հազվագյուտ լինելու մասին գրել է. «Ամբողջ տպագրված օրինակը Արևելք ուղարկուեցան և հոն իբրև շատ կարդացուող գիրք մաշեցան և կամաց կամաց անհետացան: ...Այն պատճառով ժամանակահատված և օգտակար գործ մը գործեց Էջմիածնի Սինդուն այն հազվագյուտ գործույննոր տպագրությունը ընկելով և այն Ա տպագրութենն լավագույն եղանակով» (տես թարգմանությունը «Հանդես ամսօրնայ», 1889, էջ 139—141):

10. Պատմութիւն Առաքել վարդապետի Գարիժեցոյ: Սակա դիպուածոց Հայաստանեաց եւ գաւառի Արարատայ եւ մասին Գողթան գաւառին սկսեալ ի ՌԵՄԱ թուականին Հայոց մինչ ի ՌԵԺԱ թ.: Երրորդ տպագրութիւն: Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ արդոյ Էջմիածնի 1896. ՌՅՄԵ (հրամանա Տ. Տ. Մկրտչի վեմափառ և սրբազնազոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց):

Ծանկ Ենթոց: Ցառաջարան (Ա—Ժ): Ծանկ գլխոց (ԺԱ—ԺԴ): Նախադրութիւն առաջիկայ գրոցս պատմութեան (Հեղինակին): Առաքել Դավրիժեցու պատմությանը բնագիրը (Գլուխ Ա—ԾԶ, էջ 5—671): Ցիշատակարան գրքիս (672—673): Ծանկ յատուկ անունաց (675—694): Առաքել վարդապետի պատմութեան գրչագիր օրինակի (Աթանաս դարի № 1714 և տպագիր օրինակի (Վաղարշապատ, 1884) մէջ եղած մամբումսն տարբերութիւնները (695—711):

Այս հրատարակությունը նախորդ 1884 թ. արտատպությունն է, սակայն ունի վերջի մասում տարբերություններ, այդ մասին առաջարկումով նշված է, որ Առաքել Դավրիժեցու (17 դար) երկրորդ հրատարակության ժամանակ (1884 թ.) հրատարակիչը (պետք է լինի հրատարակիչները Ս. Ք.) ձեռագրի քերականական ձևերը և ոճերը փոփոխել է ըստ իր հասկացողության, այդ պատճառով Ա ձեռագիրը նույնությամբ ընծայելու, այսինքն քերականական ձևերը, դարձվածքները և բառերը վերականգնած լինելու

համար համեմատելիք ամբողջ ձեռագիրն այս Գ հրատարակության հետ և այդ տարբերությունները մանրամասն նշանակելիք գրքիս վերջում (Ժ):

Սույն պատմագրի տիտղոսաթերթի վրա դարձյալ չի նշված բնագիրը տպագրության պատրաստողի անուն ազգանունը: Միայն առաջաբանի վերջում կա «Ղ. սարկավագ» ստորագրությունը: Այդ, ո՛վ կարող է լինել այս Ղ. սարկավագը: Հիշյալ ժամանակաշրջանում Էջմիածնի միաբանների թվում կային երկու Ղ. սարկավագներ, որոնցից առաջինը Ղևոնդ սարկավագ Գյանջեցյանն էր, իսկ երկրորդը՝ Ղուկաս սարկավագ Աղավեցյանը: Առաջին Ղ-ն պատմագրի հրատարակող համարել չենք կարող, քանի որ նա արդեն 1896 թ. «Արարատ»-ում հանդես էր գալիս իբրև Եզնիկ վարդապետ, այնինչ «Արարատ»-ի 1896—1904 թթ. համարներում մեզ հանդիպում է Ղուկա սարկավագ Աղավեցյանի նախաձեռնությամբ կազմակերպված հանգանակության ցուցակ՝ պատմիչ Առաքել Դավրիժեցու դամբարանը վերակառուցելու նպատակով: Հետագայում Ղուկաս սարկավագը վարդապետական անունով կոչվեց Բաբկեն վրդ. Աղավեցյան և հրատարակության հանձնեց նաև մի շարք այլ պատմագրեր ևս: Ահա և Դավրիժեցու պատմության երրորդ հրատարակության պատրաստողը եղել է Բաբկեն վարդապետ Աղավեցյանը: Մեր այս կարծիքը լրիվ հաստատվում է նաև միայն վերջերս մեզ հայտնի դարձած Գարեգին արք. Հովսեփյանցի կողմից Բաբկեն վ. Աղավեցյանի մասին գրած մամուլատպագրի (տես «Արարատ», 1916, էջ 48—50) և Արտակ եպիսկ. Սմբատյանի անուիս Գրացուցակի (Մաշտոցյան Մատենադարանի դիվան, Գ. արք. Հովսեփյանցի արխիվ, թղթ. № 84, վավ. № 3ա, էջ միջոցով: Դավրիժեցու երրորդ հրատարակությանը անդրադարձել է Մխիթարյան Հ. Գ[րիգոր] Գ[ալեմքարյան]ը (տես «Հանդես ամսօրնայ», Վիեննա, 1896, էջ 814):

11. Մամուլ քահանայի Ամենոց, հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յաղագս գիտի ժամանակաց անցելոց, մինչև ի ներկայս, ծայրաքաղ արարեալ: Ցառաջարանով, համեմատութեամբ, լաւելումներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի տպարան, 1898:

Ցառաջարան—Արշակ Տէր-Միքելեան (Գ—Լ): Մամուլ Ամնու բնագիրը (էջ 1—160): (Ծարունակութիւն այլ օրինակներից. էջ 161—174): (Ծարունակութիւն ԺԳ. օրինակէն. էջ 175—180): Հավելվածներ. Ա.—Յոհաննիսի վարդապետի համատու պատմութիւն անցից անցելոց ի վերին կողման Հայաստանի ըստ կարգի ժամանակագրութեան. 1572—1600, (էջ 185—199): Բ. Թարեխ Տաճկաց (էջ 200—203): Գ. Պատմութիւն ազգին Ռովքիմանց, թէ որպէս տիրեցին Կիլիկիոյ (էջ 204—212): Դ. Համառօտ պատմութիւն Ռուբինեան իշխանաց (212—223): Ե. Պատմութիւն վարոց Ներսիսի եպիսկոպոսին երգոց Սաղմոսիս քննօրի (էջ 224—243): Մանօթություններ (էջ 247—301):

Նշելով, որ միայն բեկորներ են մեզ հասել մեր անցյալի գրավոր հարստությունից, հրատարակող

Արշակ Տեր-Միքելյանը գրում է. «Հայաստանաց և եկեղեցին ուղղում է իւր ջանք դեպի յուր հարուստ մատենադարանի դարակները, մի՞թէ կույր է Հայն, որ չտեսնի յուր ժառանգության հուշարձանները: մի՞թէ խուլ է նա, որ չլսի դոցա ձայները. մի՞թէ խուլ է, որ չըմբռնի նորա ճկերներն և չընդմանալորե տաանգլատիկ, հարյուրապատիկ, և վերջապես մի՞թէ նա քնազդում անգամ չունի, որ կարենայ ճանաչել յուր հարազատ մոր տված կաթն...: «Ահա այսօր և Միածնի սրբարանը շող շողալով դեպի յուր զանների պաննաւները՝ «Ա. Էջմիածնի Մատենադարանի» մի նոր շրջան է բանում յուր սիրեցալ զավակների առաջ: Արդարև այդ կընդունեն հարազատ որդիներն և որքան ընդունվի այնքան կառատամա անսպառ աղբյուրը: Նախնաց մի նշանակւոր հիշատակարանն է Սամուել Անցու (12 դար) պատմությունը, որ մինչև այժմ դեռ ամբողջովին լույս չի տեսել» (էջ 4—5): Բնագիրը կազմվել է Էջմիածնի Մատենադարանում այն ժամանակ պահվող 18 գրչագրերի համեմատությամբ Արշակ Տեր-Միքելյանի կողմից: Նրան համեմատելու գործում օգնել են Հոգևոր մեծարանի Ա լսարանի ուսանողները: Իր ժամանակի համար դրական կարևոր նշանակություն ունեցող սույն հրատարակությունը: Կազմողը իր առաջարկում ակտուսանք էր հայտնել, որ մատենադարանում հեղինակի ժամանակակից ձեռագիր օրինակներ չկան: Այդ է եղել հիմնական պատճառը այն բանի, որ հիշյալ հրատարակության մեջ առկա են բազմաթիվ աղավաղումներ և հետագա գրիչների կողմից կատարված բնագրային ընդմիջարկություններ: Ամհըրածեշտ ենք գտնում նշելու, որ Մաշտոցյան Մատենադարանի ակազ գիտական աշխատակից Ս. Լալաֆայանը տպագրության է պատրաստել Սամուել Անցու գիտական համեմատական բնագիրը հիմնված հնագույն գրչագրերի վրա և որոնց հնագույնը այժմ Մաշտոցյան Մատենադարանում № 5619 համարի տակ պահվող գրչագիրն է ընդօրինակված 1176 թ. Ավետիս գրչի կողմից Կաթողիկոսի վանքում: Այն ամենայն հավանականությամբ ժամանակակից է հեղինակին և օգտագործված չի եղել Ար. Տեր-Միքելյանի կողմից, քանի որ 1916 թ. Լիմ անապատից մուտք է գործել Մատենադարան՝ փրկվելով մեծ եղեռնից: Նոր հրատարակությունը զերծ է լինելու տպագրում առկա բազմաթիվ հետագայի հապելումներից և անճշտություններից:

12. Մատթեոս Ուոհայեցի ժամանակագրություն, Բ. տպագրություն, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռի սրբոյ Էջմիածնի, 1898: Հրամանաւ Տ. Տ. Մկրտչի Ա վեհապետ և սրբազնագոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց:

Յատազարան (Ե—Է): Պատմութիւն Մատթեոսի մեծի քահանայի Ուոհայեցու վասն Բագրատունեաց թագաւորացն և այլոց թագաւաց ի Դժ թուականէն սկսեալ մինչ ի ՌժԱ. թիւն աւարտեալ (էջ 1—429):

Ուոհայեցու բնագիրը հրատարակության են պատրաստել Մամբրե վարդապետ Մելիք-Աղաժանը և Ներսես արքայապա Տեր-Միքայելյանը (սպա Ներսես վ. Տեր-Միքայելյան):

Ինչպես նշում են հրատարակիչները Մատթեոս Ուոհայեցու (11—12 դդ.) այն երկրորդ հրատարակության համար օգտագործել են Մայր Աթոռի մատենադարանի 6 ձեռագրեր և առաջին հրատարակությունը (տպ. Երուսաղեմ 1869 թ.): Իբրև բնագրային հիմք է ընդունվել Էջմիածնի մատենադարանի № 1693 (այժմ Մաշտոցյան մատենադարանի № 1896) գրչագիրը, որը ընդօրինակվել է 1689 թ. Հակոբ երեցի կողմից Ամրդու վանքում, նրա ստացողն է եղել Վարդան Բաղիշեցին: Ինչպես նշել ենք իր տեղում, նույն գրչագրից է կատարվել նաև Սիմեոն Ա. պարանցու «Վիպասանության» միակ հրատարակությունը: Ուոհայեցու այնպիսի հրատարակությանն անորիժ մատենադարանում տրված են այն ժամանակ Էջմիածնի մատենադարանում պահված 5 այլ ձեռագրերի և Երուսաղեմյան հրատարակության բնագրային տարբերությունները: Ինչպես ցույց են տալիս բնագիրը հրատարակության պատրաստողները, Ուոհայեցու այս երկրորդ հրատարակությունը իր նախորդ հրատարակությանն ևս համեմատած ունի մի շարք առավելություններ. այն «տարբերվում է ոչ միայն բազմաթիվ փոքր հավելումներով և ուղիղ ընթերցմաներով, այլ պարունակում է նաև երկու մեծ հատվածներ, որոնք պակաս են թե Ա տպագրության և թե միու ձեռագիրների մեջ. Ա—Է 48 էջ «Յայնմամ խորհեցաւ...» մինչև 54 էջ «Ժողովն գնոց շինութեան տանց և զլաշողունաւս գործոց» և Յովհանն Կոզլանի տեղիք. իսկ Ա 182 էջ «Յայնմ ամի եկեալ տղայ միրաջ» 194 էջ «Բայց ինքն Տեր քաղցրութեամբ հայեաց ի գործս ձեռաց իւրոց ամեն»: Ինչպես Էջմիածնում լույս տեսած պատմագրերի կարևոր մեկ մասը, այս ևս զուրկ է դժբախտաբար հատուկ անուանքի ցանկից:

13. Յակովբ Կարմեցի, տեղագիր Վերին Հայոց: Թիշատակարան ԺԷ դարու: Կ. Կոստանկանց, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռի Ս. Էջմիածնի, 1903:

Ներածական—Կ. Կ. (էջ 8—8): «Բանն է զվերին Հայոց ի Յակովբ երիցուն» (էջ 9—61): Ծանոթություններ (էջ 62—68): Ծանկ հատուկ անվանց (էջ 69—75):

Այստեղ նկարագրված են 1622—1662 թթ. դեպքերը: Ուշագրավ տվյալներ է բովանդակում Արգրու մի կատավարչության գավառների ղեկավարության և բնակչության մասին, ինչպես նաև տեղագրական կարեկոր տեղեկություններ:

14. Հայոց նոր վկաներ (1155—1843): Գիտական հրատարակություն, բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ, ընդարձակ տեղեկություններով և ծանոթություններով և ձեռագրերի, մահառակների, հատուկ անունների ու օտար բառերի մանրամասն ցուցակներով և ցանկերով: Աշխատասիրությամբ Հ. Մանանդյանի և Հ. Անատրյանի: Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռի Ս. Էջմիածնի, 1908:

Հատազարան.—Հ[ակոբ] Մ[անանդյան] (I—XI): Յուցակ և նկարագրություն ձեռագրաց (Համառոտ ցանկ ձեռագրաց. Գ—Ե): Նկարագրություն ձեռագրաց (Զ—ԻԿ): Հայոց նոր վկաներ (էջ 8—678. 113

վկայաբանությունների բնագրեր): Հավելված Ա Նոր վկայից (Էջ 679—724. 22 վկայաբանություններ): Հավելված Բ (Էջ 725—788): Ցանկ հատուկ անվանց (Էջ 737—787): Ցանկ Հայոց նոր վկաների Ա և Բ.—Ա.—Տոյ և թիվ նամատակության վկաների (Էջ 768—774): Բ.—Ինչ աղբյուրներից ենք թաղել վկայաբանությունները (Էջ 775—780): Բառարան օտարազգի բառերի (Էջ 781—785): Նոր վկաների Ա մասը սկսվում է Թեոդորոս արևելա Սերաստացուց (նամատակված 1155 թ.): մինչև Հովակիմ Սամաթիացի (նամատակված 1843 թ., էջ 678): Հավելված Ա-ը սկսվում է Հակոբ վարդապետ և ընկեր նորին (նամատակված օգոստ. 14, կիր.), մինչև Սարգիս քահանա Ղարսեցի (նամատակված 1796 թ.) և Պարոն Լույս Կաֆացի (Էջ 734):

Ինչպես գրում է Հ. Մամանյանը գրքի առաջաբանում «Վկայաբանությունն այս հատվածները խիստ թանկագին նյութ են Հայոց եկեղեցական պատմության համար և միանգամայն վստահելի աղբյուր են, որովհետև ժամանակակիցների ձեռքով են գրված, իսկ մյուս կողմից կարևոր են նաև քաղաքական-պատմական անցքերի և աշխարհագրական որոշ խնդիրների լուսաբանության և միջնադարյան հայերենի ուսումնասիրության համար»: Ահա այս վերջի պահանջքով է պայմանավորված յուրաքանչյուր ձեռագիր նյութի հրապարակմանը կցված տարբերակ-վածքների մեջբերումը: Բացի տպագիր աղբյուրներից, Անտոյանն ու Մամանյանը նաև են Մայր Աթոռի Մատենադարանում մոտ 2000 ձեռագիր: Էջ-միածնի ձեռագրերում պակաս եղող նյութերը ամբողջացվել են Վիեննայի Մխիթարյան, Ախալցխայի, Խարինի Սանատարյան վարժարանի, Սևանի վանքի, Խաչիկի վ. Դադյանի և Գևորգյան ճեմարանի ձեռագրերից: Այս աշխատության շնորհիվ շրջանառության մեջ է դրվել և պատմաբանների և քանասերների համար մատչելի դարձել անտիպ մնացած 26 արձակ վկայաբանություններ, 17 վկայաբանական տաղեր և 2 տապանագիր: Անգամ այն վկայաբանությունները, որոնք հրատարակված են եղել ժամանակին, այստեղ դրանք լույս են տեսել ձեռագրական համեմատություններով և քննականորեն:

«Հայոց նոր վկաներ»-ը լույս են տեսել նաև ժողովրդական հրատարակությամբ առանց տարբերակ-վածքների 1902 թ. երկու հատորով Էջմիածնի տպարանից (Ա. հատ., (1155—1485 թթ. 211 էջ), Բ. հատ. (1486—1843 թթ., 328 էջ):

15. **Խաչատուր արևելայի Ջուղայեցու պատմություն պարսից (ԺԸ դար)**, աշխատութեամբ Բաբգեն վարդապետ Աղաևեանց, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռի սրբոյ Էջմիածնի 1905:

Ցանկ նիւթոց (Ե): Հառաչքաբան (Է—ԺԵ): Մանենագրությունը (ԺԷ—ԺԸ): Ցանկ գլխոց (ԺԹ—ԻԲ): Գիրք հակիրճ (նախադրություն հեղինակի ԻԳ—ԻԴ): Պատմության բնագիրը (Էջ 1—326): Անունաց թագաւորաց Պարսից, համեալ ի մատենէ Պարսից իմաստասիրաց, մինչև ի տոհմն իմադէլեան (327—340): Հավելված հրատարակչի. ժամանակագրական ցանկ Պարսից թագավորների (341—352): Ցանկ հատուկ անվանց (353—871):

Սույն գործը առաջին անգամ լույս է տեսել հայոց անդրանիկ պարբերական «Ազդարար» հանդեսում 1785 թ. № 5—16, առանց պարսից թագավորների ցանկի: Առաջին հրատարակության համար ձեռքի տակ է եղել իսկական ձեռագիրը: Նրկորդո հրատարակության հրատարակիչ Բ. վ. Աղաւելյանը նշում է, որ հավանական է օգտագործված նույն մայր գրչազգրից է կատարվել նաև իր հրատարակությունը, քանի որ նրանք մեմեն են իրար և աղ աշխատությունից այլ ձեռագիր ոչ մի տեղ չկա: Հրատարակիչը նշում է, որ քնագիրը լույս է ընծայել նույնությամբ, և ոչ թե նախորդի նման կրճատումներով, անփոփոխ պահելով հեղինակի քերականական ձևերը, նույնիսկ հայտնի քերականական սխալները, կետադրությունները և ուղղագրությունը ինչպես և հատուկ անունները, քանզով միայն տպագրությունները (պատիվ): Հրատարակիչը ընթերցողներից դուրսություն տալու համար դրել է ծանոթագրություններ, ճշտելով անունները և թվականները նորագույն աղբյուրների, ինչպես նաև նորագույն արժեքավոր աղբյուրներից թաղել և դրել է վերջում Պարսից թագավորների շարքը իրենց թվականներով: Վերջում դրված է նաև նյութերի, գլուխների և հատուկ անունների ցանկ: Սույն տպագրությունը կատարված է այժմ Մաշտոցյան Մատենադարանի № 1673 գրչագրի հիման վրա:

Իր ժամանակին թիֆլիսի «Մուրճ» հանդեսը գովեստով է արձանագրել այս գրքի հրատարակումը հատկապես բարձր գնահատելով հրատարակչի կողմից պատմական անցքերը և անձնավորությունները գիտական աղբյուրների միջոցով ստուգելու եղանակը: Գրախոսողի ասելով, առանց դրան ընթերցողի համար անհնար կլիներ դատելու վավերականը անվավերականից («Մուրճ», Թիֆլիս, 1905, № 8, էջ 148—150):

16. **Հրատարակություն Մայր Աթոռ.—Հաաքաբան անունաց կաթողիկոսաց (Աղթամարյա), ծանոթություններով լույս ընծայեց Աղթամարյան աթոռի հիմնարկության հազարամյակի (815—1915) առթիվ, Մեսրոպ վ. Մաքսուդեանց, միաբան Մ. Աթոռոյ, Ս. Էջմիածին Լիբերտաշարժ տպարան Մայր Աթոռոյ 1916:**

Բարերարին Անտիք Բ. Ղուկասյանցի միշտ խնկելի հիշատակին, Մ. վ. (Գ.): Համառոտումներ (Ե): Համառոտ նկարագրություն ձեռագրերի (Է): Ընթերցողին (Թ—ԺԵ): «Հաաքաբան անունաց կաթողիկոսաց» (Էջ 1—63): Աթոռ Աղթամարա (վերցված Կ. Պոլսի 1909 թվի «Ընդարձակ օրացոյց»-ից (Էջ 66—68): Չափածո գովածքներ և հիշատակարաններ (69—89): Հավելված. (Կոնյակ Հարություն կաթողիկոսի Աղթամարա (1817 թ. (81—86): Հատուկ անուններ (97—102): Վրիպակներ (103—104):

Ձեռագիրը գրվել է 1824 թ. Աղթամարում Ղազար Գավալարի կողմից և բերվել է 1915 թ. եղևնի օրերին Էջմիածին: Նախքան առաջին անգամ առանձին գրքով այս աշխատության լույս տեսնելը նրա գրչից առաջինը օգտվել է քանակար Խ. Լևոնյանը իր Աղթամարի կաթողիկոսների պատմությունը գրելիս, իսկ վերջինից օգտվել է Մաղաքիա արք. Օրմանյանը իր «Ազգապատմութե»-ում: